

---

---

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ՄԻՑՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ԽՈՒՐՇՈՒՂՅԱՆ Հ. Վ.

Տարաշրջանային տնտեսությունը կառավարում է տարբեր ինստիտուտներ և գործընկերություններ, որոնց առավելությունը և գործունեության նպատակն է ստեղծել տարածքային զարգացման պայմաններ՝ իրենց կառուցվածքի ձևավորմանն ու կարողությունների օգտագործմանը համապատասխան:

Տարածաշրջանների նոր միջավայրին համապատասխանելը, սոցիալ տնտեսական անկայունությունները, կայունության պահպանման մարտահրավերները, կրեատիվության ընդգծումը գործոններ են, որ փոխակերպվում են ներհատուկ և արտաքին ազդակների ճկուն շարունակականության պահանջի:

Եվ այս իմաստով տարածաշրջանային տնտեսության համատեքստում գլոբալացումը և տեխնոլոգիական առաջընթացը ստիպում են մեծացնել նոր մարտահրավերները և ապագա միտումները հաղթահարելու մրցունակությունն ու պատրաստակամությունը: Տարածաշրջանային տնտեսությունը չպետք է ընկալվի միայն որպես օժանդակող գործունեություն, ինչպես նաև արդյունաբերական պարկերի և բիզնես ինկուբատորների կառուցման գործունեություն, այլ՝ հիմնականում, որպես գիտական հետազոտական և բիզնես համագործակցությունների դրական գործողությունների երկկողմանի արդյունք, որը հիմնված է առաջնային հանրային սկզբունքների վրա: Նորարարական և կապակցման աճի բևեռների միջև հավասարակշռությունը, որը հիմնված է մտավոր աղբյուրների և բարձր տեխնոլոգիական հարթակների վրա, կարևոր է տարածաշրջանային տնտեսության՝ ազգային մակարդակում ձևավորվելու համար: Տարածաշրջանային տնտեսության շրջանակում գործունեությունը ի վերջո նպաստում է տարածաշրջանի մրցունակության աճին, ինչը մեծապես շահում է ավելացված արժեքով ներդրումների ներհոսի, գիտելիքների և տեխնոլոգիաների փոխադրման և զբաղվածության աճի առնչությամբ հանրային և մասնավոր սեկտորների համագործակցությունից<sup>1</sup>:

Տարածաշրջանի մրցակցությունն արտացոլում է ներդրումներ և նորարարական գործունեություն իրականացնելու նրա կարողությունը, որի նպատակը

---

<sup>1</sup>Cowan R. van de Paal G. Innovation policy in knowledge based economy. Luxembourg, 2000, European Commission DG-Enterprise, p. 7.

գարգացման վերջին միտումներին և ազդակներին համապատասխանող նոր աշխատատեղերի ստեղծման միջոցով սեփական տնտեսության բարելավումն ու զբաղվածության աճի խթանումն է: Տարածաշրջանային տնտեսությունը կախված է հանրային կառավարման մարմինների համապատասխան կառուցվածքից և կազմակերպվածությունից, տեղական և տարածաշրջանային հազեցվածության արագությունից, տարածաշրջանային կարիքների ու ռեսուրսների մասին գիտելիքից և դրանց՝ սոցիալական ու տնտեսական հավասարակշռությունն ապահովելու համար անհրաժեշտ օժանդակությունից<sup>2</sup>: Տարածաշրջանային տնտեսության փոխկապվածությունը տարածաշրջանի ձեռնարկատիրական և նորարարական միջավայրի հետ պահանջում է նոր հարթություններ՝ բազմաթիվ քանակական փոփոխություններով: Մրցակցությունը հղկում է կառուցվածքային հարաբերությունները, և ազգային ու տարածաշրջանային կառավարությունների առաջադրանքն է ստեղծել, խթանել և զարգացնել ճիշտ ձեռնարկատիրական և նորարարական միջավայր, հասանելիության, արդյունավետության՝ ստեղծման և վերաբաշխման առումներով տարածաշրջանի ռեսուրսները դիվեսիֆիկացնելու տարածաշրջանային տնտեսությունների կարողություն:

Նորարարությունը և նորարարության իրացումը որոշում են տարածաշրջանի տնտեսության տեխնիկական և տեխնոլոգիական մակարդակի աստիճանը և լրացնում են աստիճանաբար ձևավորվող բարդ փոխհարաբերությունները՝ այդ պիսով դառնալով մի բնական մարմին, որը կազմում է տարածաշրջանային զարգացման պարամետրը: Աշխարհագրական, ոլորտային և գիտահետազոտական կապերը ինստիտուտների, ձեռնարկությունների և կազմակերպությունների միջև եղած փոխկապվածության բարձր մակարդակի հետ կարելի է տեսնել այնպիսի զարգացած երկրների օրինակներով, ինչպիսիք են Շվեդիան և Ֆինլանդիան<sup>3</sup>: Համագործակցության այս ձևը բարձրացնում է ամբողջ համակարգի արդյունավետությունը և տարածաշրջանային կառավարման առումով ճնշում է գործադրում տարածաշրջանային զարգացման շարժրնթացի վրա:

Տարածաշրջանային տնտեսությունն ունի համեմատական առավելություններ, քանի որ տնտեսության տարածաշրջանային մակարդակում պետք է իմանալ, թե ինչպես ճշգրիտ և արդյունավետ ձևավորել հատուկ պայմաններ և կառավարել դրանք գլոբալ ռազմավարական նպատակների շահերին համապատասխան: Հետամտելով ավելի բարձր կենսամակարդակի և կյանքի ավելի

<sup>2</sup>Kitson M., Martin M. and Taylor P. *Regional competitiveness: an elusive yet key concept* (Regional studies, 2004, 38(9), p. 99).

<sup>3</sup>Morgan K. *The Learning Region: Institutions, Innovation and Regional Renewal* (Regional Studies, 2007, p. 34).

բարձր որակի, չպետք է անտեսել նաև, որ համեմատական առավելությունները՝ հիմնված նյութերի ցածր գների և ցածր գնով աշխատուժի վրա, միտված են առաջացնելու կարճաժամկետ արդյունքներ, կարող են հանգեցնել թանկարժեք օգտակար հանածոների սպառմանը, մինչդեռ դրական արդյունքները հաճախ վերանում են շատ արագ: Ուսումնասիրությունների արդյունքների, գիտելիքների փորձնականում կիրառման և նորարարական ներուժի վրա հիմնված համեմատական առավելությունները նպաստում են երկարաժամկետ տնտեսական աճին, մրցունակությանն ու կայունությանը՝ զբաղվածության և եկամուտների հիմք դառնալով տարածաշրջանի տնտեսվարողների համար: Այդ իսկ պատճառով տարածաշրջանային տնտեսության կառուցվածքում գնալով մեծանում է այնպիսի ինստիտուցիոնալ միավորումների դերը, ինչպիսիք են գիտատեխնիկական կայանները, հետազոտությունների և զարգացման և տեխնոլոգիական ու տարածաշրջանային նորարարական կենտրոնները:

Գիտական և տեխնոլոգիական կայանները (ԳՏԿ) հիմնականում կատարում են հետազոտության և զարգացման առևտրականացում, գործնականում՝ նրանց մաս կազմող փոքր ու միջին ձեռնարկությունների միջոցով: ԳՏԿ-ները տարածաշրջանի զարգացման վերաբերյալ ուսումնասիրությունների և զարգացումների արդյունքները ձեռք են բերում իրենց սեփական գործողությունների կամ այլ ինստիտուտների հետ կապեր հաստատելով, ինչպիսիք են, օրինակ՝ համալսարանը, ակադեմիան, ուսումնական կենտրոնները: Այս կայանները հիմնված են ոլորտի ու տեղական տնտեսության բնույթի ոլորտային քաղաքականության իրականացման և տարածաշրջանի ներկայիս պայմաններին բնորոշ ուսումնասիրությունների հետ սերտ կապերի վրա: ԳՏԿ-ները նպաստում են ենթապայմանագրերի կնքմանը՝ խթանելով զբաղվածության աճը և կենսամակարդակի բարձրացումը՝ սկզբնական շրջանում զարգացնելով արտադրության ոլորտը, իսկ հետագա փուլերում օժանդակելով արտադրության զարգացմանը և տեխնոլոգիական ընկերություններին:

Նորարարությունների կիրառումը զգալիորեն նպաստում է տարածաշրջանի տնտեսական զարգացմանը և մրցունակությանը: Կարևոր խնդիր է այն, որ տարբեր տարածաշրջաններ ներկայումս չունեն ինստիտուցիոնալ կարողություն, որպեսզի շարունակեն տարածաշրջանում մշակել նորարարության ռազմավարություն և ստեղծեն արդյունաբերության և ծառայությունների ոլորտ՝ նոր տեխնոլոգիաների տեղափոխման և կիրառման համար: Ներկայիս իրավիճակի հանգուցալուծման համար անհրաժեշտ մեթոդը տարածաշրջանային ինովացոն կենտրոնների ցանցի ստեղծումն է՝ նորարարական գործիքների կիրառումը

մեծացնելու համար և որպեսզի՝ ա) բարելավվի տարածաշրջանի մրցունակությունը, նվազեցվեն տարածաշրջանային անհամաչափությունները և բարձրացվի զբաղվածության մակարդակը՝ տարածաշրջանային մակարդակում նորարարական գործիքների զարգացմամբ, բ) տարածաշրջանում զարգանա ձեռնարկությունների համագործակցությունը՝ հետազոտությունների զարգացման և կրթության հետ, գ) համալսարանում և այլ կրթական կենտրոններում ձեռք բերված գիտելիքները կիրառվեն գործնականում՝ կենտրոնանալով տարածաշրջանում փոքր և միջին ձեռնարկությունների վրա, դ) պայմաններ ապահովվեն փոքր և միջին նորարարական ձեռնարկությունների ստեղծման և զարգացման համար՝ կենտրոնանալով ներարտադրական գործընթացների ու տեխնոլոգիաների, մրցունակ ապրանքների արտադրման և ծառայությունների մատուցման որակի բարձրացման վրա:

Այս կենտրոնների հիմնական առաքելությունն է նորարարությունների խթանման համար անհրաժեշտ բիզնես ոլորտի և հետազոտական կարողությունների միաձուլումը: Նման կենտրոնները, խթանելով նորարարությունները և նորարարական բիզնեսների ստեղծելով, համապատասխանաբար կնպաստեն իրենց տարածաշրջաններում սոցիալ-տնտեսական զարգացմանը:

Նորարարական մոտեցումը շատ կարևոր է տնտեսական աճի համար, որը տնտեսության հիմնական առանձնահատկությունն է: Տնտեսության տարածաշրջայնացումը պետք է ծառայի զարգացման գործընթացի շահերին, որն ուղեկցվում է նոր տեխնոլոգիաներով և նորարարություններով: Ուստի հանրային սեկտորը պետք է օժանդակի տարածաշրջանային նորարարական կենտրոնների ստեղծմանը, ինչպես նաև սահմանի այլ գործիքներ, որոնք կնպաստեն այս նպատակներին: Դա հատկապես կարևոր է այն տարածաշրջաններում, որոնք արդեն ունեն կրթական և հետազոտական բավարար հիմք:

Տնտեսական և ֆինանսական ճգնաժամը, ինչպես նաև մրցակից երկրների կողմից աճող ճնշումը գործոններ են, որոնք խթանում են նոր զարգացման փուլի անցումը, որտեղ տարածաշրջանային տնտեսության կառուցվածքը հիմնվում է գործիքների այնպիսի արդյունքների և հետևանքների օգտագործման վրա, ինչպիսիք են գիտական և տեխնոլոգիական կայանները, համանման կառույցները, նորարարական ու տեխնոլոգիական կենտրոնները և դրանց ցանցերը տարածաշրջանում, ազգային տնտեսության և վերազգային ինտեգրացիոն միավորները<sup>4</sup>:

<sup>4</sup> Maskell P. and Malmberg A. *Myopia, knowledge development and cluster evolution* (Journal of Economic Geography, 2007, N 7(5), p. 603).

Այսպիսի զարգացման խթանիչ ուժ կարող են լինել ազգաբնակչության շրջանում կրթական մակարդակի բարձրացումը, ազդեցիկ ուսումնասիրությունների զարգացման հիմնադրումը, մասնավոր սեկտորի նորարարական ներուժը, համակրելի բիզնես միջավայրի ստեղծումը և տարածաշրջանային հեղինակությունների մասնակցությամբ խթանված հանրային մասնավոր նորարարական համագործակցությունները: Առանց օրենսդրական նշանակալից փոփոխությունների, իրավասությունների և ֆինանսական խթանների, տարածաշրջանը կկորցնի մասնավոր կապիտալի ներդրման համար գրավչությունը և նորարարական ներուժը<sup>5</sup>: Ահա թե ինչու տարածաշրջանային տնտեսության նոր կառուցվածքի ձևավորումը պետք է հիմնվի երկարաժամկետ մրցակցության վրա:

## КОНКУРЕНТОСПОСОБНОСТЬ РЕГИОНАЛЬНОГО РАЗВИТИЯ ЭКОНОМИКИ

ХУРШУДЯН А. В.

### Резюме

Конкуренентоспособность, стратегия устранения региональных диспропорций и поощрение сотрудничества между региональными органами власти и бизнес-сектором формируют предпосылки для региональной экономики. Рост конкурентоспособности региональной экономики и условия регионального развития основаны на стимулировании ин-новаций, передаче технологии и новой структуры региональной экономики.

## THE COMPETITIVENESS OF THE REGIONAL DEVELOPMENT OF ECONOMY

H. KHURSHUDYAN

### Abstract

The competitiveness, strategies removing regional disproportions and encouraging cooperation between regional governments and business sector, form a premise for the regional economy. This paper analyses the growth of the competitiveness of the regional economy and the terms of regional development based on fostering innovation, technology transfer and the new structure of the regional economy.

---

<sup>5</sup> **Martin R.** *Thinking About Regional Competitiveness: Critical issues (Report Commissioned by the East Midlands Regional Development Agency, Nottingham, 2005, p. 25).*